

ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 1-ին
փողոց, 6-րդ փակուղի, 6-րդ հողամաս հասցեում
նախատեսվող պահեստի շինարարություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝ «Աթենք» ՍՊԸ



1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ	4
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	4
1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	4
1.3.1. Գոյություն ունեցող իրավիճակը	4
1.3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ	5
1.3.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	6
2. ՆԱԽՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ	6
2.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները	6
2.1.1. Սեյսմիկ պայմանների բնութագիրը	7
2.1.2. Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի բնութագիրը	8
2.2 Կլիման	9
2.3. Օդային ավազան	13
2.4. Հողային ռեսուրսներ	13
2.5. Սոցիալ-տնտեսական պայմանները	14
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	16
3.1. Ռիսկերի գնահատում	16
3.2. Արտանետումների աղբյուրները	17
3.3. Զրոգտագործում և ջրահեռացում	17
3.4. Հողածածկ	17
3.5. Կենսաբազմազանություն	18
3.6. Սոցիալական ռիսկերը	18
3.7. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	18
3.7.1. Մթնոլորտային օդ	18
3.7.2. Զրային ռեսուրսներ	18
3.7.3. Կանաչապատում	18
3.7.4. Աղմուկ	19
3.7.5. Սոցիալական խնդիրներ	19
3.7.6. Փոխհատուցում	19

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ձեռնարկողի վերաբերյալ տեղեկություններ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է «Աթենք» ՍՊԸ-ն (պետական գրանցման վկայականի պատճենը կցված է), հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Աղբյուրի փ., 59/1:

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է. ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 1-ին փողոց, 6-րդ փակուղի, 6-րդ հողամաս հասցեում պահեստի շինարարություն: Տարածքը «Աթենք» ՍՊԸ-ի սեփականությունն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման պետական վկայականի պատճենը կցված է):

Գործունեության նպատակն է կառուցել պահեստ ընդհանուր 11,044 քմ մակերեսով և վարձակալությամբ տրամադրել տնտեսվարող սուբյեկտներին: Պահեստում նախատեսված է պահպանել շինարարության ոլորտում օգտագործվող մետաղներ և մետաղական կոնստրուկցիաներ, այդ թվում՝ խողովակ, թիթեղ, շվեյեր, երկտավր, ամրան, ամրալար և այլն:

1.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.3.1. Գոյություն ունեցող իրավիճակը

Շինարարությունը նախատեսվում իրականացնել պատվիրատու՝ «Աթենք» ՍՊԸ-ին պատկանող 4.8 հա տարածքի վրա: Տարածքը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզի Գետամեջ գյուղի միջնամասում՝ արտադրական գոտում, Հրազդան գետի կիրճի վերին հատվածում, Երևանից 22 կմ հեռավորության վրա:

«Աթենք» ՍՊԸ-ի հողատարածքում կան կառուցման փուլում գտնվող սառցարանային տնտեսություն, ընդունող մաս, պահակակետ: Հողատարածքի մնացած մասն ամայի է: Նշված տարածքը նախկինում տրամադրված էր Երևան – Սևան արագընթաց երկաթգծի /մոնոռելս/ շինարարության համար: Տարածքը ամբողջությամբ փորված է մոնոռելսի անցկացման համար, այստեղ չկան բնական հողածածկ, բուսածածկ և կենդանիների ապրելավայրեր: Տարածքի նպատակային նշանակությունը «Արտադրական նշանակության արդյունաբերական օբյեկտների հողամաս»:

Հողամասը արևմտյան կողմից սահմանակից է «Կամուրջշին» ՍՊԸ-ին, որը զբաղվում է երկաթբետոնե կոնստրուկցիաների արտադրությամբ, իսկ հյուսիս-արևմտյան կողմից՝ «Սարանիստ» ՍՊԸ-ի Գետամեջի մասնաճյուղին, որը զբաղվում է քարերի վերամշակմամբ (իրադրության սխեման՝ համապատասխան նշագրումներով, կցված է):

1.3.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Ճարտարապետաշինարարական լուծումներ

Կոտայքի մարզ, Գետամեջ 1-ին փողոց, 6-րդ փակուղի, թիվ 6 հողամասում պահեստի ճարտարապետական մասը կատարված է ճարտարապետահատակագծային առաջադրանքի, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի հիման վրա:

Պահեստ

Իրենից ներկայացնում է հատակագծում ուղղանկյուն կտրվածքի 121.15 մ x 91.16 մ չափերով, մեծաթռիչք ծածկերով, մետաղական սյուներով, առանց պատերի շինություն: Հարկի բարձրությունը հատակից առաստաղ 4.0-ից 7.0 մ է: Տանիքները երկթեք են, ազատ ջրահեռացմամբ:

Շինարարական աշխատանքներն իրականացնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները.

ա. նախապատրաստել շինհրապարակի տարածքը և ապահովել անխափան մուտք դեպի տարածք,

բ. բարեկարգվում է գոյություն ունեցող մոտեցնող ճանապարհը,

գ. տարածքը մաքրվում է գրունտի կուտակումներից և աղբից:

Բացի վերը նշված միջոցառումներից, շինարարության ընթացքում նախատեսվել է տարածքում ունենալ նաև հետևյալ շինությունները. հանդերձարան, հագուստի չորանոց, ճաշարան՝ պատրաստի սննդի ընդունման համար, լոգարան, գործիքների պահեստ՝ մեկական հատ, բիոզուգարան՝ 2 հատ: Բանվորական աշխատանքի պաշտպանվածությունն ապահովելու նպատակով բանվորներին տրամադրվելու են անհատական պաշտպանության միջոցներ, այդ թվում՝ հատուկ արտահագուստ, պաշտպանիչ գլխարկ, ձեռնոց, կոշիկ և այլն: Շինարարության ընթացքում աշխատելու են 10 բանվորներ (բանվորներ, վարպետներ, աշխղեկ), մի շարք մեքենաներ, այդ թվում՝ էքսկավատոր, ավտոկռունկ, բուլդոզեր, ինքնաթափ, ավտոաշտարակ, գլոմ, բետոնմղիչ: Շինարարության ընթացքում կուտակվող շինաղբն ու կենցաղային աղբը (մոտ 10 խ. մ.) պարբերաբար տեղափոխվելու է Մասիսի աղբավայր՝ համաձայն կցված ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի, իսկ տարածքում առկա ողջ հողային զանգվածը չի տեղափոխվելու այլ վայր, օգտագործվելու է տեղում՝ անհարթությունները վերացնելու և ետլիցք իրականացնելու համար: Ընդհանուր հողամասի տարածքը 4.8 հա է, իսկ կառուցապատման ենթակա տարածքի մակերեսը՝ 11,044 ք. մ.:

Ինչպես երևում է կցված աշխատանքների ժամանակացույցից, շինարարությունը տևելու է 2 տարի, ընդ որում առավել ռիսկային աշխատանքները՝ հողային աշխատանքները և հիմքերի կառուցումը, կտևեն ընդամենը 7 ամիս:

1.3.3. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, որոնց ցանկը և քանակները ներկայացված են աշխատանքային նախագծի համապատասխան բաժնում: Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

Ըստ նախնական գնահատման՝ ջրցանի համար օրական կօգտագործվի 1,7 մ³, իսկ խմելու նպատակով՝ 0,3 մ³ ջուր:

Ջրամատակարարումը կատարվելու է տարածքի մոտով անցնող ջրատարից՝ համաձայն Վեդլիա ընկերության հետ 29.10.2019 թ.-ին կնքված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման /կեղտաջրերի մաքրման/ ծառայությունների մատուցման /մատակարար - ոչ բնակիչ բաժանորդ/ պայմանագրի հիման վրա /պատճենը կցվում է/:

Պլանավորվում է օգտվել հարակից շինության համար նախատեսված անթափանց պատերով ստորգետնյա տարողությունից, որում կկուտակվեն կենցաղային կեղտաջրերը և պարբերաբար կտեղափոխվեն մոտակա կեղտաջրերի ցանց:

Էլ. սնուցումը կկատարվի՝ ըստ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր N0667789-ի /պատճենը կցվում է/:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1. Ֆիզիկաաշխարհագրական և երկրաբանական պայմանները

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ՀՀ Կոտայքի մարզի, Գետամեջ համայնքում: Համայնքը գտնվում է Երևան-Սևան մայրուղուց դեպի արևմուտք 600 մ հեռավորության վրա, Ակունք և Հրազդան գետի քարափին՝ սարահարթի վրա, Հրազդան գետի ձախափնյա կիրճի եզրին: Մոտակա բնակելի առանձնատունը գտնվում է դեպի հյուսիս 410 մ հեռավորության վրա, հողամասը գտնվում է Հատիս լեռնագագաթից հարավ-արևելք 11 կմ, Արայի լեռնագագաթից հարավ-արևմուտք՝ 19,5 կմ:

Շրջակայքի ռելիեֆը տեկտոնահրաբխային և հրաբխաերոզիոն տիպի է: Այն լավաներով ծածկված եզրային սարավանդ է՝ փոքրաթեք ծալքավոր կառույցների վրա: Այս տեղանքը լավայի հոսքի եզրագիծ է՝ հարավային, արևմտյան և հյուսիս-արևմտյան կողմերից մշակվող գյուղատնտեսական հողատեսքերի հարևանությամբ: Հյուսիսից և հյուսիս-արևմուտքից հարևան է նույնանման ռելիեֆ ունեցող սարավանդի, որի առանձին մի քանի տասնյակ մետր հարաբերական բարձրություն ունեցող բլրակների գագաթներին երևում են մերկացած բազալտային ապարները:

Տարածաշրջանի լանդշաֆտը՝ աշխարհագրական թաղանթը, կիսանապատային բուսականությամբ ծածկված տափաստանային ալիքավոր տարածք է, որը կրել է ինտենսիվ անտրոպոգեն ազդեցություն: Բուսականությունը բլուրների ստորոտներում խիստ տուժել է գերարածեցումից, բլրալանջերին և գագաթներին համեմատաբար անխաթար է:

Հողամասը քարքարոտ է, տեղ-տեղ մերկանում է անդեզիտաբազալտային լավայի հոսքը, առանձին խոշոր քարաբեկորներից բացի կան բազմաթիվ քարակույտեր: Հնարավոր է, որ ժամանակին տարածքի հյուսիսային մասը մելորացվել է և մշակվել: Այս տարածքի ռելիեֆի մոտ կեսը տեխնածին է:

2.1.1. Մեյսմիկ պայմանների բնութագիրը

Գետամեջ համայնքի տարածքը գտնվում է Հայաստանի երկրաշարժային համեմատաբար կայուն գոտում:


Կազմված է ՀՀ *սեյսմիկ գոտիավորման* սխեմատիկ քարտեզը, որով Հայաստանի տարածքը գոտիավորված է ըստ միևնույն մեծության սեյսմիկ վտանգի աստիճանի: Համաձայն այդ քարտեզի Գետամեջ համայնքի տարածքին վերագրվում է $a = 0.2g$ *գրունտի հորիզոնական արագացում* $v = 20$ սմ/սմ²/գրունտային ստվարաշերտի վերին մակերևույթի վրա երկրաշարժի ժամանակ առաջացած արագացման մեծությունը հորիզոնական ուղղությամբ/, որը համարժեք է մինչև 3 բալ երկրաշարժի ուժգնության:

ՀՀ Ծինարարության նախարարի ՀՀՇՆ II-6.02-2006 հրամանով սահմանվում է այն չափանիշները, որոնք պետք է դրվեն շենքերի ու կառուցվածքների նախագծման ու կառուցման ընթացքում */սեյսմակայունության հիմնական սկզբունքներ/*: Մեյսմակայուն շինարարությունը իրականացվում է տարբերակված՝ երեք, ըստ ուժգնության աճող հաջորդականությամբ՝ 1, 2, 3 սեյսմիկ գոտիներում, որոնց համար *գրունտի հորիզոնական արագացման* մեծությունը համապատասխանաբար 20, 30 և 40 սմ/վրկ² է: Նույն հրամանի հավելվածում ներկայացված է ՀՀ բնակավայրերի ցուցակը՝ ըստ սեյսմիկ գոտիների:

ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարի 12.02.2013 թ. N 100-Ն հրամանով սահմանվում է սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կազմակերպման և իրականացման դրույթները, համաձայն որոնց՝ մշակվում են սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզներ, որոնք դրվում են մարզերի և համայնքների զարգացման ծրագրերի, քաղաքաշինական փաստաթղթերի մշակման հիմքում: Այդ քարտեզները կիրառվում են տարածքների, շենքերի և շինությունների սեյսմիկ խոցելիության նվազեցման միջոցառումների պլանավորման, արտակարգ իրավիճակների կառավարման և նրանց հետևանքների վերացման համար:

Հայցվող տարածքի կառուցապատման համար պարտադիր է «Մեյսմիկ պաշտպանության մասին» ՀՀ օրենքի և վերը նշված իրավական փաստաթղթերի պահանջների կատարումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵՑՄՄԻԿ ԵՐՋԱՆՑՄԱՆ ՔԱՐՏԵԶ
SEISMIC ZONATION MAP OF THE REPUBLIC OF ARMENIA



Նկ.1. ՀՀ սեյսմիկ շրջանացման սխեմատիկ քարտեզը /նկարը վերցված է ՀՀ Պետական վիճակագրական վարչության կայքից: $a=0.2g$ ՝ մինչև 3 բալ, $a=0.3g$ ՝ 3-ից 9 բալ, $a=0.4g$ ՝ 9 և ավելի բալ, $a=0.5g$, կործանարար երկրաշարժ/

2.1.2. Մակերևութային և ստորերկրյա ջրերի որակի բնութագիրը

Տարածաշրջանի հիմնական ջրագրական միավորն է Հրազդան գետը: Հողամասի հեռավորությունը Հրազդան գետի մոտակա հատվածից կազմում է 400 մ:

Տարածքում գոյություն չունեն բնական աղբյուրի ելքեր, գերխոնավ տարածքներ, ջրային օբյեկտներ: Ակնհայտ է, որ տարվա տաք եղանակին արտահոսքից բացի տեղումներից առաջացած մակերևութային ջրերը արագորեն գոլորշիանում են:

ՀՀ տարածքում ջրային ռեսուրսների ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոլերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ըստ «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն» (ներկայում՝ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն») 2019 թվականի տեղեկագրի՝ Հրազդան գետի Արզնի ՀԷԿ-ից ներքև հաստվածներում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված լուծված թթվածնով, թթվածնի քիմիական պահանջով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, վանադիումով, կալիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով¹:

2.2 Կլիման

Գետամեջ համայնքի տարածքի կլիմայական պայմանների նկարագրությունը ներկայացվում է՝ ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011 թ. սեպտեմբերի 26-ի N 167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն» ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթի տվյալների: Այդ փաստաթղթով սահմանում են կլիմայական հարաչափեր, որոնք կիրառվում են շենքերի և շինությունների, ջեռուցման, օդափոխության, ջրամատակարարման համակարգերի նախագծման, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծման և կառուցապատման ժամանակ: Կլիմայական ցուցանիշները հիմնականում հաշվարկված են Հայաստանի Հանրապետության այն բնակավայրերի համար, որտեղ տեղակայված օդերևութաբանական կայանները ունեն դիտարկումների բավականին երկար (30 տարուց ոչ պակաս) շարք: Ցուցանիշները սրբագրված են վերջին տասնամյակի (2009 թ. ներառյալ) տվյալների հաշվառումով: Տեղումների որոշ հարաչափերի հաշվարկման համար օգտագործվել են նաև կարճ շարք ունեցող օդերևութաբանական դիտակետերի տվյալները: Տարածքի համար հիմք է վերցվել մոտակայքում գտնվող Եղվարդի օդերևութաբանական կայանի երկարատև դիտարկման արդյունքները: Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով՝ տարածքի կլիման բնորոշվում է ցամաքային, ցուրտ ձմեռներով և շոգ, չոր ամառներով: Ձմռան ամիսներին բնորոշ է կայուն ձնածածկույթը՝ համարյա երեք ամիս տևողությամբ: Տեղումների միջին տարեկան քանակը՝ 436 մմ, թեև հնարավոր են նաև հեղեղներ՝ օրական մինչև 53 մմ հուլիս ամսվա ընթացքում: Տարվա ամենաշոգ և ամենաչոր ամիսը օգոստոսն է /առավելագույն ջերմաստիճանը՝ 38 C⁰, օդի նվազագույն հարաբերական խոնավությունը 38 %/:

Քամու վարդի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գերակշռում է քամու հյուսիսային և հյուսիս-արևելյան ուղղությունները: Ընդ որում, այդ պատկերը նույնն է տարվա բոլոր եղանակներին և հավանաբար կախված է Արագած բարձր լեռան նկատմամբ հայցվող տարածքի տեղադիրքով: Բոլոր դեպքերում հայցվող տարածքը կարելի է բնորոշել հողմաանվտանգ:

¹ Տեղեկագիր ՀՀ շրջակա վիճակի մասին, 2019 թ.: ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն», Երևան, էջ 88:
<http://armmonitoring.am/public/admin/ckfinder/userfiles/files/texekang/tarekan/Annual-19.pdf>

Աղյուսակ 2.1. ա. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Արզնիի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արզնի	1262	-4.5	-2.5	2.8	9.5	14.2	18.7	22.3	22.3	18.2	11.5	4.9	-1.3	9.7	-28	38

Աղյուսակ 2.1. բ. Օդի հարաբերական խոնավությունը Արզնիի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	հունվարին	օգոստոսին	
Արզնի	1262	74	74	67	65	64	58	53	49	57	65	74	79	65	-

Աղյուսակ 2.2. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Արզնիի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Ձնածածկույթ, մմ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը	Տարվա ձնածածկույթի օրերը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը
	Ըստ ամիսների														
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	տարեկան	457	42
Արզնի	34	43	44	58	77	40	25	16	26	34	40	38	457	69	-
	14	20	23	33	30	24	30	23	42	25	19	39	42		

Քանի որ Արզնի օդերևութաբանական կայանի տվյալները քանու պարամետրերի վերաբերյալ բացակայում էին, ստորև ներկայացնում ենք Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալները

Աղյուսակ 2.3. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C°												Միջին տարեկան	Ֆացարձակ նվազագույն	Ֆացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Եղվարդ	1336	-5.1	-3.2	2.4	9.3	14.3	18.6	22.7	22.7	18.5	11.7	4.8	-1.9	9.6	-33	39

Աղյուսակ 2.4. Օդի հարաբերական խոնավությունը Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով

Ֆարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		հունվարին	օգոստոսին
Եղվարդ	1336	73	69	63	60	60	54	48	49	59	70	74	61	66	33

Աղյուսակ 2.5. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի անվանումը	Տեղումների												Ձնածածկույթ, մմ		
	Քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Սարվա	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը	
	Ըստ ամիսների														Առավելագույն տասնօրյակային ձնածածկույթը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			

Եղվարդ	34	36	43	58	64	39	23	13	16	39	36	35	436		68	74	156
	30	28	42	40	42	29	53	45	35	39	37	28	53				

Աղյուսակ 2.6. Քանո պարամետրերը Եղվարդի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին արագությունը, մ/վ	Կրկնվիությունը, %										Սիստոլիկ ճնշումը, մմս			Կրկնվիությունը, %				
		Միջին արագությունը, մ/վ										Սիստոլիկ ճնշումը, մմս			Կրկնվիությունը, %				
		Հյուսիս-արևմտյան (ՀԱ)	Հյուսիս-արևելյան (ՀԱՎ)	Արևելյան (ԱՎ)	Հարավ-արևելյան (ՀԱՎՎ)	Հարավ (ՀՎ)	Արևմտյան (ԱՄ)	Հարավ-արևմտյան (ՀԱՄ)	Արև (Ա)	Հյուսիս-արևմտյան (ՀԱՄ)	Արև (Ա)	Հյուսիս-արևելյան (ՀԱՎ)	Հարավ-արևելյան (ՀԱՎՎ)	Հարավ (ՀՎ)	Արև (Ա)	Հյուսիս-արևելյան (ՀԱՎ)	Հարավ-արևելյան (ՀԱՎՎ)	Հարավ (ՀՎ)	Արև (Ա)
Եղվարդ	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	1	16	17	18	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "0" տարիների ընթացքում	
	ար	6	48		11	3	15	6	9	2	40	1.1							
	ամս	1.7	1.8	1.7	1.5	1.7	1.9	1.7	1.8	1.7									
	ամս	5	48	7	3	17	1	8	2	23	2.6								
	հուլ	3.0	3.8	2.7	2.4	2.4	2.8	2.4	2.7	2.1									
	հուլ	6	73	4	1	7	4	4	4	1	11	4.8							
	հուլ	4.9	5.5	4.9	1.7	3.0	2.5	3.0	3.0	1.8									
	հուլ	5	55	6	3	16	8	6	6	1	31	1.9							
	հուլ	2.7	3.7	2.7	1.9	1.9	2.3	1.8	1.8	2.2									
	հուլ	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	1	16	17		18

2.3. Օդային ավազան

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Մակայն Գետամեջ գյուղում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ում տվյալներ չկան: Որոշակի պատկերացում բնակավայրերի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Դրա համար «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը առաջարկում է համապատասխան ձեռնարկ-նուղեցույց²: Ըստ այդ նուղեցույցի մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են².

- փոշի՝ 0.2 մգ/մ³,
- ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ³,
- ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ³,
- ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ³:

2.4. Հողային ռեսուրսներ

Գետամեջ համայնքի տարածքը տիպիկ լեռնային չոր տափաստանային գոտի է՝ հողի բնորոշ շագանակագույն տիպով, որը հանդես է գալիս հողային երկու ենթատիպով, ցածրադիր տեղանքներում՝ «շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային, ցեմենտացված», իսկ բարձրադիր տեղանքներում՝ «բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային, ցեմենտացված» ենթատիպերով: Այս հողերը դեյուվիալ և դեյուվիալ-պրոյուվիալ ծագում ունեն: Նրանց լիթոլոգիական կազմը ավազակավեր են, կավավազային խճաքարեր, խճավազով և գլաքարերով:

Հողի երոզացվածության աստիճանը VI կարգի է, 70%-ից ավելի, չերոզացված տարածքներ են շրջակայքի բլրագագաթները, իսկ բաց հանքերի խոռոչները, ճանապարհների հարակից տարածքները գործնականում ունեն տեխնածին ռելիեֆ:

Չոր տափաստանային շագանակագույն հողերը աչքի են ընկնում հումուսի աննշան պարունակությամբ /2-3.5 %/, հողի ջրային մզվածքի ռեակցիան թույլ հիմնային է /P^H =7.4-8.5/, կատիոնային փոխանակության ունակությունը՝ 30-35 մգ/էկվ, 0.1 մմ-ից փոքր հողային մասնիկների զանգվածային մասը բարձր է /պետք է լինի 10-75%/, հիմնականում՝ փոշիացված են ու հողմնահարված: Տարածքի ողողվածության

¹ EIMC N 15-1/14 ՀՀ շրջակա միջավայրի էկոլոգիական մոնիթորինգի արդյունքների մասին. Տեղեկանք, օդային ավազան, էջ 22

² ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ. «ՀՀ բնակավայրերի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաները» նուղեցույց-ձեռնարկ: Երևան-2011

աստիճանը, մանավանդ բլուրների ստորոտներում, խիստ բարձր է, տարածքի մակերեսի զգալի մասը խիստ խճացված է ու քարքարոտ: Հողի բերրի շերտի հզորությունը գրոյից մի քանի սանտիմետր է: Նման հողերի համար ՀՀ կառավարության «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» 20.07.2006 թ. N 1026-Ն որոշման 8-րդ հոդվածով *հողի բերրի շերտի հանման նորմա չի սահմանվում:*

Անմիջապես հայցվող տարածքում նախկինում փորվել է խոռոչ մոնոռելսի շինարարության համար, և բերրի հող չկա:

2.5. Սոցիալ-տնտեսական պայմանները

Գետամեջ համայնք

Համայնքը գտնվում է նախալեռնային գոտում, ծ. մ. 1250 մ բարձրության վրա: Հեռավորությունը Երևանից՝ 15 կմ, մարզկենտրոնից՝ 35 կմ, մակերեսը 1.45 կմ²:

Բնակչությունը՝ 845 մարդ: Բնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ, որոշ մասը անասնապահությամբ և արտագնա աշխատանքներով: Համայնքում գործում են՝ 1 միջնակարգ դպրոց, 1 մշակույթի տուն, 1 գրադարան:

Աղյուսակ 2.7. Սոցիալ-տնտեսական ցուցանիշները

N	Ցուցանիշները	Մարդ
1.	Բնակչության թվաքանակը, մարդ	845
2.	Տնային տնտեսությունների թվաքանակը	200
3.	Շնտանեկան նպաստ ստացող ընտանիքների քանակը	6

Համայնքի բնակչության 49%-ը կազմում են տղամարդիկ, իսկ 51%-ը՝ կանայք: Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմը ներկայացված է աղյուսակ 2.8-ում:

*Աղյուսակ 2.8. Համայնքի բնակչության տարիքային և սոցիալական կազմի
ցուցանիշները*

Հ/Հ	Ցուցանիշները	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
1.	Համայնքի բնակչության թիվը, այդ թվում՝	845	434	418
	մինչև 1 տարեկան	4	3	1
	1-2 տարեկան	12	7	4
	3-4 տարեկան	22	14	8
	5-6 տարեկան	22	11	11
	7-10 տարեկան	52	26	26
	11-14 տարեկան	28	8	20
	15-17 տարեկան	21	6	15
	18 և ավելի տարեկան	684	359	333
2.	Կենսաթոշակատուներ, ներառյալ՝ հաշմանդամներ) այդ թվում՝	83	56	27
	Տարիքային և աշխատանքային	694	355	339
3.	Միակորմանի ծնողագուրկ երեխաներ	2	0	2
4.	Երկկադմանի ծնողագուրկ երեխաներ	0	0	0
5.	Հաշմանդամ երեխաներ	2	2	0
6.	Խնամակալության հանձնված երեխաներ	0	0	0
7.	Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ	0	0	0
8.	Արցախյան պատերազմի մասնակիցներ	0	0	0
9.	Հաշմանդամներ	3	1	2
10.	Զբաղվածներ	68	37	31
11.	Գործազուրկներ	533	266	267
12.	Ընտանեկան նպաստների պետական համակարգում գրանցված ընտանիքների թիվը	8		
13.	Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքների թիվը	0	0	0

Գործազուրկների մեծամասնությունը կազմում են կանայք: Աշխատունակ տղամարդկանց զգալի մասը զբաղված է արտագնա աշխատանքով:

Աղյուսակ 2.9 Համայնքի հողերն՝ ըստ նպատակային նշանակության և հողատեսքի

Համայնքի հողերն՝ ըստ նպատակային նշանակության և հողատեսքի	Տարածքը (հա)
Համայնքի վարչական տարածքը	560.33
Գյուղատնտեսական նշանակության հողեր	275.53
Վարելահող	119.39
Արոտ	9.95
Այլ հողատեսքեր	146.19

Բնակավայրերի նշանակության հողեր	214.08
Բնակելի կառուցապատման	156.68
Այդ թվում տնամերձ	84.72
Այգեգործական, ամառանոցային	71.86
Հասարակական կառուցապատման	6.49
Շնորհանույր օգտագործման	11,87
այլ հողեր՝	39,04
արդյունաբերության, ընդերքօգտագործման նշանակության հողեր՝	43,10
արդյունաբերության՝	15,1
գյուղատնտեսական՝	28,0
էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նշանակության հողեր՝	10,75
էներգետիկայի՝	0,91
տրանսպորտի՝	9,77
կոմունալ ենթակառուցվածքների՝	0,07
հատուկ պահպանվող տարածքների նշանակության՝	4,06
պատմական և մշակութային՝	4,06
ջրային նշանակության՝	12,87
զետեր՝	6,08
ջրանցքներ՝	6,78
հիդրոտեխնիկական և ջրատնտեսական այլ՝	0,01

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

3.1. Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման, բեռնման և այլ հողային աշխատանքների ,
- հողային զանգվածների և շինադրի տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում կավելանա աղմուկի և փոշու մակարդակը:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

3.2. Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման և այլ հողային աշխատանքների կատարման ընթացքում,
- դիզելային վառելիքի այրման արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Նախատեսվող աշխատանքների ընթացքում կառաջանան հետևյալ վնասակար նյութերի արտանետումները.

- չդիֆերենցված մասնիկներ /փոշի/,
- ածխածնի մոնօքսիդ,
- ազոտի երկօքսիդ,
- մուր /մոխիր/,
- ծծմբի երկօքսիդ:

3.3. Ջրօգտագործում և ջրահեռացում

Պահեստի շինարարության ընթացքում ջուրը կօգտագործվի քանդման և հողային աշխատանքների ընթացքում տարածքի ջրցանի, գրունտների խոնավացման նպատակով, ինչպես նաև անձնակազմի խմելու, կենցաղային կարիքների համար:

Պահեստի շահագործման ժամանակ արտադրական ջրօգտագործում չի նախատեսվում:

Ջրամատակարարումը կիրականացվի Գետամեջ համայնքի ջրագծից, իսկ որպես կոյուղի կծառայի հողամասի կենցաղային կեղտաջրերի հավաքման հորը, որի տարողությունը 20 մ³ է, ինչը թույլ կտա ապահովել ավելի քան 1 ամսվա հավաքում: Հավաքված կեղտաջրերը պարբերաբար հատուկ մեքենաներով կտեղափոխվեն մոտակա կեղտաջրերի ցանց:

3.4. Հողածածկ

Աշխատանքների իրականացման վայրում բերրի հող չկա, և հողային ռեսուրսներին վնաս չի հասցվելու:

3.5. Կենսաբազմազանություն

Ինչպես նշվել է, տարածքը արտադրական նշանակության է, որտեղ նախկինում կատարված աշխատանքների արդյունքում չկան բուսականություն և կենդանիների ապրելավայրեր:

3.6. Սոցիալական ռիսկերը

Շինարարական աշխատանքների ընթացքում կբարձրանա աղմուկի մակարդակը, կառաջանան փոշու և դիզելային վառելիքի այրման արտանետումներ, կինտենսիվանա երթևեկությունը: Շինարարության ժամանակ կխաթարվի տեղանքի պատկերը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ այդ ազդեցությունը տիպային է բոլոր շինարարական աշխատանքների համար, կարճաժամկետ և նվազ ծավալների:

3.7. Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Սույն ենթաբաժնում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները՝ ըստ ազդեցության ուղղությունների:

3.7.1. Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշու առաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:

3.7.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- բետոնի խառնուրդը կբերվի մոտակայքում գտնվող բետոնահանգույցից և տեղում չի պատրաստվի,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր, և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար:

3.7.3. Կանաչապատում

Համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի /կցված է՝ տարածքի 5 տոկոսը նախատեսվում է կանաչապատել: Կանաչապատման տարածքը կկազմի՝

$$4.8 \text{ հա} \times 0.05 = 0.24 \text{ հա կամ } 2,400 \text{ ք. մ.}$$

Քանի որ տարածքում չկա բերրի հող, կանաչապատման նպատակով կիրականացվի ծառատունկ: Տարածքում տնկվելու են 30 սոսիատերև թխկիներ, ինչպես ներկայացված է կից կանաչապատման նախագծում: Բուսահողը (Ապարանի) մատակարարվելու է «Լանդշաֆտ Դիզայն» ՍՊԸ-ի կողմից 12 խ. մ. ծավալով: Կանաչապատ տարածքի ոռոգման աղբյուրը, ձևը և եղանակը համաձայնեցվելու է համայնքապետարանի հետ և իրականացվելու է պայմանագրի հիման վրա:

3.7.4. Աղմուկ

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների աշխատանքը,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,
- բացառել մի քանի տեխնիկական և տրանսպորտային միջոցների միաժամանակ շահագործումը:

3.7.5. Սոցիալական խնդիրներ

Ինչպես ցույց է տրվել վերը բերված հիմնավորումներում, ինչպես նաև կատարված հաշվարկներով, նախատեսվող ազդեցությունը կլինի կարճաժամկետ և ոչ ուժեղ: Բացի այդ, բոլոր վերը թվարկված բնապահպանական միջոցառումները ուղղված են առաջին հերթին մերձակա բնակչության առողջությանը և կենսակերպին չվնասելուն:

Պետք է հաշվի առնել, որ շինարարության ժամանակ կպահանջվի աշխատուժ և մասամբ աշխատատեղերը կհամալրվեն տեղի բնակչության ներկայացուցիչներով:

Շահագործման փուլ

Պահեստի շահագործման ժամանակ շրջակա միջավայրի վրա զգալի ազդեցություն չի նախատեսվում:

3.7.6. Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Ստորև բերված է բնապահպանական ռիսկերը մեղմացնող միջոցառումների ցանկը և մոնիթորինգի պլանը:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգ			Կատարող
		Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	
Շինանյութերի և մատակարարում	Շինանյութերի գնում հուսալի մատակարարներից	Մատակարարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապվառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապվառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապվառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը պահեստավորում են անմիջապես հիմքերի մոտ, կատարվում է ետլիցք, ավելցուկը օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապվառու

Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում	Շինհրապարակ	Արտաքին գնում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, Գետամեջի համայնքապետե-տարանի վերահսկողու-թյուն
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակակից պահեստի ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում ու կանաչապատում տեղանքին բնորոշ ծառատեսակներով	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	Կապալառու
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Տեղանքի կանաչապատում					